

ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՅԱՆՔ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՏԱՐԵԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ ԺՆԵՎՈՒՄ

Օգոստոսի 10—28 օրերին Ժնևի Ե.Հ.Խ.-ի կենտրոնում տեղի ունեցավ Կենտրոնական կոմիտեի տարեկան նստաշրջանը:

Սույն նստաշրջանին մասնակցեցին հայ եկեղեցու կողմից տ. Շահե արքեպ. Աճեմյանը և տ. Արսեն եպս. Բերբերյանը, որոնք Ե.Հ.Խ.-ի Նայրոբիի հինգերորդ համաժողովում ընտրվել էին Կենտրոնական կոմիտեի անդամ:

Ե.Հ.Խ.-ի Կենտրոնական կոմիտեի սույն առաջին նստաշրջանին մասնակցում էին շուրջ 300 հոգի, որոնցից 130-ը Ե.Հ.Խ.-ի Կենտրոնական կոմիտեի անդամներ էին, իսկ մնացածները՝ խորհրդականներ, հյուրեր, դիտորդներ, մամուլի ներկայացուցիչներ:

Օրակարգի հարցերն էին.

1. Ե.Հ.Խ.-ի առաջիկա յոթ տարիների գործունեության ծրագրի մշակում և հաստատում.
2. Ֆինանսական միջոցների հայթայթում.
3. Մարդու իրավունքների պաշտպանության հարց.
4. Տեղական եկեղեցիների զորացում:

Լիագումար նիստից հետո ժողովականները բաժանվեցին առանձին խմբերի, որոնք քննարկեցին օրակարգի հարցերը՝ մասնավոր կարևորությամբ, ընդունվեցին համապատասխան որոշումներ, որոնք վերջում բերվեցին լիագումար նիստին ի հաստատություն:

Սեպտեմբերի 7-ին տ. Արսեն եպս. Բերբերյանը Գերագույն հոգևոր խորհրդի նիստում հանգամանորեն զեկուցեց Ե.Հ.Խ.-ի Կենտրոնական կոմիտեի վերոհիշյալ նստաշրջանի աշխատանքների մասին:

Գերագույն հոգևոր խորհուրդն ի տեղեկություն ընդունեց տ. Արսեն եպիսկոպոսի զեկուցումը և իր գնահատությունն արձանագրեց տ. Շահե և տ. Արսեն սրբազանների աշխատանքները Ե.Հ.Խ.-ի օգոստոսյան նիստի մասնակցության առիթով:

ԱՄՆ-Ի ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ս/թ. օգոստոսի 4-ին, երկօրյա ոչ պաշտոնական այցով, Մայր Աթոռ ժամանեցին ԱՄՆ-ի եպիսկոպոսական եկեղեցու ներկայացուցիչներ Լոնգ Այլենդի եպիսկոպոս

Ջոնաթան Շերմանը, Դալլաս Տեխասի քորեպիսկոպոս Ռոբերտ Տերվիլիգերը, նույն եկեղեցու էկումենիկ բաժնի պատասխանատու աշխատակից դոկտ. Վիլյամ Նորգրենը և խորհրդական դոկտ. Պոլ Անդերսոնը: Բարձրաստիճան հյուրերը միաժամանակ համաանգլիական և օրթոդոքս եկեղեցիների մերձեցման ու միության համար գործող վարդապետական հանձնաժողովի անդամներ են:

Երևանի օդանավակայանում հյուրերին դիմավորեցին և բարի գալուստ մաղթեցին Մայր Աթոռի դիվանապետ ու Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ տ. Արսեն եպիսկոպոս Բերբերյանը, նույն բաժնի ընդհանուր քարտուղար Պարգև Շահբազյանը և հոգևոր ճեմարանի դասախոս Սարգիս սարկավագ Սարգսյանը:

Օգոստոսի 5-ին, ժամը 14-ին, Վեհարանում հարգարժան հյուրերին ընդունեց և բարի գալուստ մաղթեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը: Հայոց Հայրապետի և եպիսկոպոսական եկեղեցու ներկայացուցիչների միջև տեղի ունեցավ սիրալիր զրույց՝ եղբայրական ջերմ մթնոլորտում: Այնուհետև Վեհարանի սեղանատունը, ի պատիվ հյուրերի, տրվեց ճաշկերույթ, որի ընթացքում փոխանակվեցին բաժակաճառեր Նորին Սրբության և հյուր եպիսկոպոսների միջև:

Հայաստանում գտնվելու օրերին մեծարգո հյուրերն այցելեցին սուրբ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, վերակառուցվող սուրբ Սարգիս եկեղեցի, Ծիծեռնակաբերդի Հայ նահատակաց հուշարձան, ուղևորվեցին Գառնի և սուրբ Գեղարդ վանք, Մայր տաճարի և Հին Վեհարանի թանգարաններում ծանոթացան հայ հին եկեղեցական արվեստի նմուշներին, այցելեցին Էջմիածնի շրջակայքի պատմական տաճարները՝ ս. Հռիփսիմե, ս. Գայանե, և այլ տեսարժան վայրեր:

Օգոստոսի 6-ին, ուրբաթ օրը, ժամը 13-ին, Վեհարանում, հանուն Վեհափառ Հայրապետի, հյուրերին ընդունեց և ողջերթ մաղթեց Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպիսկոպոս Տեր-Ստեփանյանը:

Նույն օրը, ժամը 15-ին, եպիսկոպոսական եկեղեցու ներկայացուցիչները մեկնեցին Թբիլիսի:

Երևանի օդանավակայանում հյուրերին ճանապարհեցին Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար Պարգև Շահբազյանը և Սարգիս սարկավագ Սարգսյանը: